



Հաստատված է՝  
«Մեյլաթ Բանկ» ՓԲԸ Խորհրդի  
30.12.2017թ. թիվ \_74\_\_\_ որոշմամբ

Հաստատված է՝  
«Մեյլաթ Բանկ» ՓԲԸ Գործադիր  
տնօրենի  
29.12.2017թ. թիվ \_119 \_ որոշմամբ

Գործադիր տնօրեն՝ Ս. Մուսավի

Խորհրդի նախագահ՝ Մ.Բիգդելի

Խորհրդի անդամ Յ. Բահարի

Խորհրդի անդամ Ս.Նասրի

Խորհրդի անդամ Յ. Հաթիմ

Խորհրդի անդամ Ֆ.Աղայի

Երևան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿԸ.....	3
2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ .....	3
3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ .....	3
5. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	3
6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	3
7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	4

**1. ՆՊԱՏԱԿԸ**

Սույն կարգի նպատակն է՝ կանոնակարգել «Մելլաթ բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներքին հսկողության կազմակերպման գործընթացը, սահմանել ներքին հսկողության հիմնական նպատակներն ու խնդիրները, կազմակերպման մեթոդները և հիմնական օղակները:

**2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ**

Սույն կարգի դրույթները կիրառվում են Բանկի բոլոր շահագրգիռ ստորաբաժանումների կողմից:

**3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ**

Բանկում պատշաճ ներքին հսկողության համակարգի ձևավորման, կենսագործունեության և դրա արդյունավետության շարունակական մոնիտորինգի իրականացման համար և սույն կանոնակարգի կիրառման համար պատասխանատու են Բանկի խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) և գործադիր մարմինը: Ներքին հսկողությունն իրականացվում է ոչ միայն բանկի ղեկավարների, ներքին հսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման և Տեղեկատվական անվտանգության համակարգի կառավարման մարմնի, այլ նաև բանկի բոլոր աշխատակիցների կողմից՝ իրենց պարտականությունների շրջանակներում:

**4. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Ներքին հսկողության կարգը մշակված է համաձայն՝

- 3.1. ՀՀ կենտրոնական բանկի կողմից 12/10/2004 թ. թիվ N 250-Ն որոշմամբ սահմանված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կանոնակարգ 4-ի և

**5. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

4.1	<b>Բանկ</b>	«Մելլաթ բանկ » ՓԲԸ
4.2	<b>Հսկողական գորառույթներ իրականացնող մարմիններ</b>	Բանկի ներքին աուդիտ, ռիսկերի կառավարման և մեթոդոլոգիայի բաժին, իրավաբանական և իրավական համապատասխանության ապահովման բաժին
4.3	<b>Ներքին դիտարկումների մարմին (ՆԴՄ)</b>	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող Բանկի կառուցվածքային ստորաբաժանում
4.4	<b>Կառավարման մարմին</b>	Բանկի խորհուրդ
4.5	<b>Գործադիր մարմին</b>	Բանկի Գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ,
4.6	<b>Տեղեկատվական անվտանգության համակարգի կառավարման մարմին</b>	Տեղեկատվական անվտանգության համակարգի կառավարումը իրականացնող բանկի կառուցվածքային ստորաբաժանում

**6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**



Բացակայում են:

**7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**7.1. Բանկի կառավարման մարմինը պատասխանատու է՝**

- 7.1.1 փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման և դրա ընթացիկ աշխատանքի ու վերահսկողության իրականացման համար,
- 7.1.2 Հսկողական գորառույթների համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության շարունակական մոնիտորինգի ապահովման համար
- 7.1.3 Ներքին հսկողության համակարգի գործունեության համար, Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարման համար

7.1.4

**7.2 Բանկի գործադիր մարմինը պատասխանատու է՝**

- 7.2.1 Բանկի խորհրդի կողմից ընդունված քաղաքականության և ռազմավարության իրականացման,
- 7.2.2 Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման համակարգերի արդյունավետ կիրառման, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների, ընթացակարգերի և այլ ներքին իրավական ակտերի բանկում արդյունավետ շրջանառության համար,
- 7.2.3 Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման և դրա ընթացիկ աշխատանքի ու վերահսկողության իրականացման համար, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտերի ներդրման, ամբողջական ու արդյունավետ կիրառման ապահովման համար,
- 7.2.4 Ներքին հսկողության համակարգի արդյունավետության հետևողական մոնիտորինգի համար,
- 7.2.5 Հայտնաբերված խնդիրների ժամանակին և ամբողջապես քննարկման, դրանց լուծման ուղղությամբ որոշումներ կայացնելու և այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման համար,
- 7.2.6 Ներքին հսկողության կուլտուրայի ձևավորման համար, ինչպես նաև հսկողության համակարգի գործունեությունը անձնակազմի կողմից խոչընդոտող երևույթները բացառելու նպատակով ներքին հսկողության կազմակերպմանը և նպատակներին վերաբերող դասընթացների կազմակերպման համար,
- 7.2.7 Ներքին հսկողության օպերատիվության ապահովման նպատակով՝ արժանահավատ ու ամբողջական ներքին տեղեկատվության և արդյունավետ հաղորդակցության ապահովման համար,
- 7.2.8 Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի արդյունավետ կիրառման, ամբողջականության, հուսալիության և գաղտնիության գնահատման համակարգի հուսալիության համար,
- 7.2.9 Բանկում առկա հաղորդակցման համակարգի որևէ խափանման կամ թերության դեպքում քննարկման և հնարավորինս սեղմ ժամկետներում վերացման համար,
- 7.2.10 Գործադիր տնօրենը, իր կողմից իրականացվող բանկի գործունեության և ներքին հսկողության ընթացիկ ղեկավարման վերաբերյալ, եռամսյակը մեկ անգամ, հաշվետվություն է ներկայացնում բանկի խորհրդին:

**7.3 Ներքին դիտարկումների մարմինը պատասխանատու է՝**

- 7.4 Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ՀՀ



Կենտրոնական բանկի կողմից մշակված իրավական ակտերի և բանկի ներքին իրավական ակտերի պահանջների իրականացման նկատմամբ հսկողության համար:

**7.5 Հսկողական գործառնություններ իրականացնող մարմինների պատասխանատվությունը:**


- 7.5.1. Ռիսկերի կառավարման և մեթոդոլոգիայի բաժինը ապահովում է ռիսկերի ժամանակին բացահայտում, չափում, հսկողություն և կանխարգելում:
- 7.5.2. Իրավաբանական և իրավական համապատասխանության ապահովման բաժինը ապահովում է բանկի գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, էթիկական կորպորատիվ մշակույթի վարքագծի կանոններին:
- 7.5.3. Ներքին աուդիտը իրականացնում է վերահսկողություն բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի կշռման նկատմամբ, ինչպես նաև հետստուգումային հսկողություն:
- 7.5.4. Տեղեկատվության անվտանգության կառավարման մարմինը ապահովում է տեղեկատվական ռեսուրսների, գործընթացների և բանկի տեղեկատվական անվտանգության կանոնների համապատասխանության հսկողությունը:

**8. ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**8.1. Ներքին հսկողության հիմնական նպատակներն են՝**

- ա. գործառնական նպատակ՝** բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտում և կառավարում, բանկի աշխատանքների արդյունավետ կազմակերպում և անձնակազմի արդյունավետ կառավարում,
- բ. տեղեկատվական նպատակ՝** որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիություն, ամբողջականություն և ժամանակին տրամադրում, բանկի ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովում,
- գ. համապատասխանության նպատակ՝** բանկի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին քաղաքականությունների և կարգերի (կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների) պահանջներին:

- 8.1. Ներքին հսկողության համակարգը ներառում է բանկի կազմակերպական կառուցվածքը, գործընթացներն ու միջոցառումները, որոնք կոչված են պահպանելու բանկի ակտիվները, ապահովելու հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, բարձրացնելու իրականացվող գործառնությունների արդյունավետությունը, ապահովելու բանկի գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը, այլ իրավական ակտերին և բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին ակտերին:
- 8.2. Ներքին հսկողության համակարգը պետք է համարժեք լինի բանկի կողմից իրականացվող գործառնությունների ծավալներին և ռիսկայնությանը:
- 8.3. Ներքին հսկողությունը պետք է կազմի բանկի գործառնական համակարգերի անբաժանելի մասը:
- 8.4. Բանկի ներքին հսկողությունը կազմակերպվում է այնպես, որ ապահովի ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ ակտերի և ներբանկային կանոնակարգերի կիրառման հսկողությունը, Բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարության և ռիսկերի մակարդակի պահպանումը, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ընդունված

	<b>ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ</b>	<b>ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ</b>
--	--------------------------------	-------------------------------

Ներքին իրավական ակտերի ներդրումը և կիրառումը, գործառնությունների իրականացման գործընթացի հսկողությունը, Բանկի կյուբական և ֆինանսական միջոցների պահպանման հսկողությունը, Բանկի գործունեության վերլուծությունը և կարգավորումը:

**8.3 Բանկի ներքին հսկողության հիմնական խնդիրներն են,**

- 8.3.1. Բանկի առօրյա գործունեության ընթացքում հնարավոր սխալները և թերությունները ժամանակին հայտնաբերումը և դրանք ճշտման ուղիների կանխորոշումը,
- 8.3.2. Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից իրականացվող գործողությունների համապատասխանության ապահովում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից մշակված իրավական ակտերի և բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջներին և ստանդարտներին:
- 8.3.3. Հաշվապահական, ֆինանսական և հարկային հաշվետվությունների մեջ Բանկի գործունեության իրական և համարժեք արտացոլումը:
- 8.3.4. Բանկի հաճախորդների սպասարկման մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում:
- 8.3.5. Բանկի ակտիվների պահպանումը:
- 8.3.6. Բանկի պարտավորությունների հսկողությունը:
- 8.3.7. Կրկնակի հսկողության ապահովում:
- 8.3.8. Համակարգչային (ցանցային) հսկողության ապահովում
- 8.3.9. Բանկի յուրաքանչյուր էական գործարար գործընթացի համար բանկում ներդրվում են համապատասխան հսկողական մեխանիզմներ, որոնք սահմանվում են տվյալ գործառնությունները կանոնակարգող ներքին իրավական ակտերով: Հսկողական մեխանիզմներն են՝ կանխարգելիչ (ուղղված անցանկալի արդյունքների կանխարգելմանը), բացահայտող (ուղղված անցանկալի գործառնությունների բացահայտմանը), ինչպես նաև անցանկալի հետևանքները վերացնող (ուղղված անցանկալի հետևանքների վերացմանը): Անցանկալի արդյունքների/գործառնությունների բացահայտման, կանխարգելման և վերացման հսկողական մեխանիզմներն են.
  - 1) բանկի գործունեության պարբերական ուսումնասիրությունը և գնահատումը բանկի կառավարման մարմինների կողմից (աշխատակիցներից կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների պահանջման, իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ աշխատակիցներին հարցերի տրման և նրանցից պատասխանների, պարզաբանումների և բացատրությունների ստացման և այլ միջոցներով),
  - 2) բանկին պատկանող գույքի և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային, ավանդային պայմանագրեր) ֆիզիկական պաշտպանվածության ապահովումը, ինչը ենթադրում է, որ բանկին պատկանող գույքը և առավել կարևոր փաստաթղթերը պաշտպանված են կորստից, չթույլատրված դուրսհանումից կամ օգտագործումից,
  - 3) ներքին սահմանաչափերի, դրանցից թույլատրելի շեղումների սահմանումը և պահպանումը (օրինակ՝ առանձին գործարքների, գործունեության ցուցանիշների նկատմամբ և այլն),

	<b>ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ</b>	<b>ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ</b>
--	--------------------------------	-------------------------------

- 4) որոշակի սահմանաչափերը գերազանցելու դեպքում որոշումների կայացումը, գործարքների հաստատումը և (կամ) թույլատրումը վերադաս իրավասու անձանց կողմից,
- 5) աշխատանքային պարտականությունների պատշաճ տարանջատումը և աշխատակիցներին շահերի բախում չպարունակող պարտականությունների հանձնարարումը,
- 6) գույքի և գրառումների համատեղ պահպանումը, երբ որոշակի գործընթացների համար հավասարապես հաշվետու են երկու կամ ավելի անձինք (օրինակ, երբ երկու կամ ավելի բանալիներից կամ գաղտնաբառերից յուրաքանչյուրը, որոնք պետք է օգտագործվեն դրամապահոց, արխիվ կամ այլ պահուստարան մուտքի իրավունք ստանալու համար, վստահվում են առանձին անհատների),
- 7) կրկնակի ստուգումը,
- 8) տվյալների և գրառումների համադրումը,
- 9) պարբերական գույքագրումը,
- 10) կրկնակի կամ բազմակի ստորագրությունների պահանջումը,
- 11) հայտնաբերված խախտումների, թերությունների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած անցանկալի երևույթների վերացման կապակցությամբ հանձնարարականներ տալը և դրանց պատշաճ ու ժամանակին կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը,
- 12) բանկի հայեցողությամբ՝ հսկողության այլ մեխանիզմներ:

## 9. ԱՆՑՈՒՄԱՆՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգը չի կարող խոչընդոտել Բանկի բնականոն գործունեությանը:

- 9.1. Սույն կարգը պարտադիր է Բանկի բոլոր ստորաբաժանումների համար:
- 9.2. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ ուժը կորցրած ճանաչվել միայն Բանկի խորհրդի որոշմամբ:
- 9.3. Բանկերի ներքին հսկողության համակարգը ապահովում է հուսալի և բնականոն բանկային գործունեության իրականացումը՝ հաշվի առնելով բանկի գործունեության բնույթը, առկա ու հնարավոր ռիսկերը, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, գործարար շրջանառության սովորույթները ու բանկի գործունեության միջավայրը:
- 9.4. Բանկի գործադիր մարմնի, հսկողական գործառույթներ իրականացնող անձանց, ներքին դիտարկումների մարմնի կողմից հայտնաբերված հսկողության համակարգի թերությունները և բացթողումները բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվում են խորհրդին:
- 9.5. Բանկն ապահովում է ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի հասանելիությունը բանկի անձնակազմին՝ էլեկտրոնային տարբերակով: Բանկի աշխատակազմը ապահովում է բանկի անձնակազմի տեղեկացվածությունը բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի դրույթներին՝ իրենց կողմից իրականացվող գործառույթների մասով՝ բանկի իրավաբանական և իրավական համապատասխանության ապահովման բաժնի կողմից դրանք խմբագրված տեսքով ստանալուց հետո:



ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

ՆԵՐՔԻՆ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ